# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի 385-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

--------- 2020 թվականի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 385-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «**Վարորդական վկայական ստանալու համար քննություններ ընդունելու և վարորդական վկայական տալու կարգը, վարորդական վկայական ստանալու համար պարտադիր ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը, ազգային ու միջազգային վարորդական վկայականների ձևերն ու նկարագրերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**» N 385-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 78-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«78.Տրանսպորտային միջոցներ վարելու դադարեցված իրավունքը վերականգնվում է և վարորդական վկայականները վերադարձվում են վարելու իրավունքը դադարելու հիմքը վերանալուց հետո՝ սույն կարգով սահմանված կարգով տեսական և գործնական քննությունները հանձնելուց հետո:»,

2) 80-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) «D1E» ենթակարգը և «DE» կարգը՝ «AM», «A1», «B1», «C1», «C1E» և «D1» ենթակարգերի, «A», «B», «BE», «C», «**CE**» և «D» կարգերի նկատմամբ:»,

3) N 5-րդ և 6-րդ ձևերում «հաշվի առնելով ընդունված ______________ քննության արդյունքները» բառերը համապատասխանաբար փոխարինել «կողմից ներկայացված փաստաթղթերը հիմք ընդունելով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

« » ________ 2020 թ.

ք.Երևան